Եզրակացություն

ՀՀ Շիրակի մարզի Արևշատ համայնքում «Մոդուլային» տիպի մսուր-մանկապարտեզ կառուցելու վերաբերյալ

ՀՀ Շիրակի մարզի Արևշատ համայնքում բնակվում են մոտ 1869 մարդ, որից 85-ը 3-5 տարեկան երեխաներ են: Արևշատ համայնքում մանկապարտեզի կառուցման ծրագիրն իրականացնելու պարագայում շուրջ 70 երեխա կհանդիսանան ծրագրի շահառուներ:

Մանկապարտեզի կառուցումը կնպաստի երեխաների նախադպրոցական կրթության ապահովմանը, համայնքում նկատվող արտագաղթի կանխմանը, երիտասարդ ընտանիքների հայրենի գյուղում ամրապնդմանը, գյուղատնտեսության ծավալների ընդլայմանը և զբաղվածների թվի ավելացմանը: Արևշատ համայնքի 3-5 տարեկան երեխաներին հնարավորություն կտրվի հաճախելու մանկապարտեզ իրենց համայնքում, ինչպես նաև կստեղծվի շուրջ 10 նոր աշխատատեղ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն առարկություն չունի Հայաստանի Հանրապետության ՀՀ Շիրակի մարզի Արևշատ համայնքում մանկապարտեզի կառուցման վերաբերյալ:

Հիմնավորում

ՀՀ Շիրակի մարզի Արևշատ համայնքում «Մոդուլային» տիպի մսուր-մանկապարտեզ կառուցելու վերաբերյալ

<u>Արևշատ համայնքի մասին</u>

Արևշատ համայնքը հիմնադրվել է 1828-30 թթ.: Համայնքը սահմանակից է Նորաշեն, Մեծ Մանթաշ, Փոքր Արևշատ համայնքի հիմնադրվել է 1828-30 թթ.: Համայնքը սահմանակից է Նորաշեն, Մեծ Մանթաշ, Փոքր Մանթաշ, Սպանդարյան, Գեղանիստ, Ջրառատ համայնքներին: Հեռավորությունը մայրաքաղաքից-95 կմ, հեռավորությունը մարզկենտրոնից-35 կմ:Համայնքի մակերեսը - 2486.8 հա.: Բնակչության թիվը-1869 մարդ, որից 85-ը 3-5 տարեկան երեխաներ են: Արևշատ համայնքում մանկապարտեզի կառուցման ծրագիրն իրականացնելու պարագայում շուրջ 70 երեխա կհանդիսանան ծրագրի շահառուներ:

<u>Հանրօգուտ ծրագիր</u>

ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 6-ի № 741-Ն և 2021 թվականի մայիսի 20-ի № 823-Ն որոշումներով ՀՀ քաղաքաշինության կոմիտեին հատկացվել են համապատասխան ֆինանսական միջոցներ՝ թվով 19 համայնքում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի բազմակի օգտագործման օրինակելի նախագծա-նախահաշվային փաստաթղթերի տեղակապման և դրանցից թվով 9-ում, այդ թվում նաև ՀՀ Շիրակի մարզի Արևշատ համայնքում, մանկապարտեզների կառուցման շինարարական աշխատանքների մեկնարկման համար:

Մանկապարտեզը նախատեսված է կառուցել ՀՀ Շիրակի մարզի Արևշատ համայնքի 8-րդ փողոց 5/2 հասցեում գտնվող 0.06 հա հողամասում:

Մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների նախահաշվային արժեքը կազմում է շուրջ 500.0 մլն. դրամ գումար: Այն հնարավոր է փոփոխվել կապված հատկացված հողատարածքի առանձահատկությունների հետ:

- **հանրօգուտ ծրագրի շրջանակներում իրականացվելիք ներդրումների ծավալը.**

Նախագծվող մանկապարտեզի մասնաշենքը մեկ հարկանի է 24,9 մ x 74,1 մ արտաքին չափսերով: Այն իրականացվելու է մոդուլային շինարարության սկզբունքով:

Մանկապարտեզը ունի վեց խմբային բջիջներ, որից երկուսը՝ մսուրային և չորսը՝ նախադպրոցական: Յուրաքանչյուր երկու բջիջ կազմում են մեկ մոդուլ: Այդպիսով շենքը կունենա երեք հատ խմբային մոդուլներ և մեկ վարչա-տնտեսական մոդուլ: Մոդուլների ֆունկցիոնալ կապը իրականացվում է միջանցք-ռեկրեացիայի միջոցով: Յուրաքանչյուր խմբային բջիջ ունի խաղասենյակ, ննջարան, հանդերձարան, սանհանգույց և բուֆետ, որը նախատեսված է 23 երեխայի համար:

<u>Տեխնիկատնտեսական ցուցանիշներ</u>

Հողամասի մակերեսը՝ - 0.06 հա.

Երեխաների քանակը՝ - 140 երեխա.

Շենքի կառուցապատման մակերեսը՝ -1352 քառ. մ.

Արտաքին աստիճանների և թեքահարթակի մակերեսը՝ - 62.4 քառ. մ.

Ընդհանուր մակերեսը՝ - 1293,0 քառ. մ.

Օգտակար մակերեսը՝ - 1254,3 քառ. մ.

Շինարարության ծավալը 0.000 Նիշից բարձր՝ - 7436 խոր. մ.

Շինարարության ծավալը 0.000 Նիշից ցածր՝ - 1490 խոր. մ:

- **հանրօգուտ ծրագրի ժամկետը**

2021 թվականի հատկացված գումարը տեղափոխվեց 2022 թվական: Պատճառը՝ ՀՀ Պետական գույքի կառավարման կոմիտեի հաշվեկշռում հաշվառված ՀՀ Շիրակի մարզի Արևշատ համայնքի 8-րդ փողոց թիվ 5 հասցեով գույքի կազմից «Մոդուլային» տիպի մսուր-մանկապարտեզ կառուցելու նպատակով պահանջվող հողամասը առանձնացնելու և որպես առանձին գույքային միավոր գրանցելու գործընթացն է:

- **հանրօգուտ ծրագրի իրականացման ընթացքում ակնկալվող արդյունքները**

Մանկապարտեզի կառուցումը կնպաստի երեխաների նախադպրոցական կրթության ապահովմանը, համայնքում նկատվող արտագաղթի կանխմանը, երիտասարդ ընտանիքների հայրենի գյուղում ամրապնդմանը, գյուղատնտեսության ծավալների ընդլայմանը և զբաղվածների թվի ավելացմանը: Արևշատ համայնքի 3-5 տարեկան երեխաներին հնարավորություն կտրվի հաճախելու մանկապարտեզ իրենց համայնքում, ինչպես նաև կստեղծվի շուրջ 10 նոր աշխատատեղ: